ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՐՏ 15, 1895. ԹԻՒ 5 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 92

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St., New York, N. Y. Vol. V, 1895

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցեղափոխութիւն ի Կ. Պոլիս.— Մեր թերութիւնք, Բ.— Նամակ Պոսթոնէն. Հայասէր Ամերիկացիք ի Պոսթըն։— Նամակ ի Պուլկարիոյ.— Նամակ ի Ֆիլատէլֆիոյ.— Այլ և Այլք։

ՀԱՅԿԻ խմբագիրն անակնկալ բարեդիպութեամբ մի պատեհութիւն ունեցաւ Քոնէքթիքըթի Տէմպլերի քաղաքին նշաւոր երէց Տոքթ. Փիրսի եկեղեցւոյն մէջ խօսիլ Հայաստանի վերայ, Մարտ. 10ի կիրակի երեկոյի պաշտօնն այդ խնդրոյ յատկացուած լինելով՝ նոյն առաւօտուն ծանուցման համեմատ։ Ուշադիր և համակիր բազմութիւն մի ներկայ էր, որք ցայնվայր անծանօթ էին Հայկական խնդրոյն։ Քաջալերական զուգադիպութեամբ մի, ճիշդ այն ժամուն յորում ՀԱՅԿԻ խմբագիրն թրքաց չարաղէտ իշխանութեան վերջ դնելու կը յորդորէր զքրիստոնեայս, լուսինն ալ կը խաւարէր։ Տոքթ. Փիրս ևս հակիրճ ատենախօսութեան մէջ մաղթեց որ լուսնի այս բոլորական խաւարումն նախանշան մի լինէր բարբարոս թրքաց մահիկին ընդ փոյթ և յաւէրժական խաւարման։

Տէնպէրիի Իվնինկ Նիուզ օրաթերթն այս ժողովոյ մասին տեղեկագրելով՝ շատ պատուաբեր և համակիր լեզուաւ կը խօսի Հայ ազգին և ատենախօսին վերայ։

Լոնտոն Մարտ 12.— Փալ Մալ Կազէթին Թիֆլիզէն կը հեռագրեն թէ Կովկասի Հայք ընդարձակօրէն կը ստորագրեն ուղերձ մի ուղեալ առ Տիար Կլատստոն։ Ուղերձն, որ կը սկսի Ղուկասու ԺԳ. Լիսոյն 29էն 37 համարներովն, Տիար Կլատստոնի նորալուր ճառախօսութիւնն ի Հավարտն կը նմանցուցնէ բարի Սամարացւոյն առակին, և երախտագիտութեամբ շնորհակալ կը լինի նախկին նախարարապետէն վասն իւր պաշտպանութեանն Հայոց։ Դիտաւորութիւն ունին նաև Աւետարանի հին հայերէն օրինակ մի զոյգ ընդ ուղերձին յղել նմա իբրև նուէր Հայաստանի ժողովրդէն։

(Կովկասի Հայոց այս ձեռնարկն յոյժ գովելի է եթէ արդէն Վեհ. Զարին կառավարութեան ևս մի կերպ դիմում եղած է Հայոց կողմանէ։ ԽՄԲ.)

Ուրախ եղանք Հնդկաստան հրատարակուող ԱՐԱ. անգլիերէն ամսաթերթին, հնգամսեայ ընդհատմանէն յետոյ, վերստին շարունակումն տեսնել։ Այս ամսաթերթ 40 երեսէ կը բաղկանայ և անգլիերէն հասկացող բոլոր մեր հայրենակցաց խորին ուշադրութեան արժանի է։ Տարեկան բաժնեգինն է երկու տոլար. Հասցէն է. Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" են

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամէն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ՀԱՅՔի ներկայ թիւն 8 երեսէ կը բաղկանայ փոխանակ 16ի։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Ա

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ մ՚էր, բառին ճըշմարիտ առմամբն յեղափոխութիւն, այն որ կատարուեցաւ ի Կ. Պոլիս մի քանի ամիս առաջ։ Հայոց պահպանողական կուսակցութիւնն չարաչար ջախջախեցաւ և ազատականնն իւր ձեռք առաւ ազգային գործոց ղեկավարութիւնն։

Կ՚արժէ որ այդ պատմական անցքի վերայ քննական ակնարկ մի արձակեմք.

Ցայտնի է թէ Թրքաց և Հայոց միջեւ դարաւոր մտերմութիւն եղած է ի Կ. Պոլիս, և Օսմանեան վեհապետք ու աւագանին աւելի վստահօրէն իրենց խորհրդակից առած են Հայերն քան ուրիշ ո և է հպատակ կամ օտար անհատականութիւններ։ Մինչ Օսմանեան տէրութիւնն հզօր էր և Եւրոպիոյ անգամ ահարկու, սրոյն գոհ էր և սրոյն միշտ ամենայաղթ լինիլ կը յուսար. բայց յորմէ հետէ իւր յառաջխաղացութեան ահեղասահ ալիք խորտակեցան Վիէննայի պարսպաց դէմ և ըսկսաւ յետս յետս ընկրկիլ լուսաւոր Եւրոպիոյ զօրութեանց առջեւ, զգաց նաև, թէպէտ ընդ աղօտ, թէ իմացական ուժոյ կարօտ էր, և զայդ ույժ գտաւ ու գընահատեց իւր հայ հպատակաց մէջ։ Մեր ամիրայք, իւրեանց խոնարհ և անմշակ երեւութի տակ, ճշմարիտ պետական մարդիկ հանդիսացան, և նոցա որդիք եղան Պետութեան վառօղապետք, ճարտարապետք, դիւանագէտք և օրէնսդիրք։ Քիչ ժամանակէն դիւաշունչ մի խորհուրդ յղացաւ Թուրքն թէ մի գուցէ երկրի ուժերն Հայոց ձեռքն անցնին բոլորովին և Հայք տիրեն ու կառավարեն վերջապէս։ Հաւանական է որ Անգլիացիք զայս երկիւղ ներշնչեցին Օսմանցւոց յօրէ անտի Սըր Սթրաթֆորտ Րէտքլիֆի։ Անգլիացին որ վաճառականի ագահ աչօք կը նայի ամէն բանի ու ամէն ազգի, չուզեց որ Հայ հպատակք Թուրքիոյ Եւրոպացիներն հանդիսանան, այլ յաւէտ հնարեցաւ ինքն իսկ շահագործել անդ։ Եւ այսպէս ապուշ Թուրքն առաւ հայատեաց քաղաքականութեան սերմն Մահմուտի օրով, որ զարգացաւ յաւուրս Մէճիտի ու Ազիզի և իւր աղետաբեր արդիւնքներն առատօրէն տըւաւ Համիտի ձեռամբ։

Ներսէս թափանցած էր Թրքաց քաղաքականութեան, ուստի և անոնց հետ համաձայնութեամբ իւր ազգի վիճակին դարման անելէ անյոյս՝ դիմեց Եւրոպիոյ։ Նենգամիտ և օգտախնդիր Անգլիոյ հնարիւք մեր ազգային ջանադրութիւնք ճնացին անպտուղ և Ներսէս մեռաւ յուսավրէպ։

Յետ Ներսէսի մահուան Կ. Պոլսոյ ազգայնոց ծանծաղամիտ և թրքախօս մասն —Մաքսուտներ ու Նուրեաններ աշխարհական կարգէն, Յարութիւն Վեհապետեաններ ու Խորէն Աշըգեաններ եկեղեցական կարգէն — վատ յիմարութեամբ գըլուխ կանգնեցան յետախաղաց շարժմանն, և ինկան Սուլթանի մահաբոյր գիրկն, նորա հայրախնամ վեհանձնութենէն սպասելով Հայ ժողովրդի վիճակին բարւոքումըն։

Ժողովուրդն ալ որ Եւրոպայէն յուսահատած էր և դեռ ինքն իւր ուժով բան մ՚անելու սիրտն չունէր, ի սկզբան մի քանի քայլ առաւ այս կոյր առաջնորդներու ետեւէն, բայց շուտով զգաց թէ նոր ուղղութեան հետեւանօք Դրան հարստահարութիւնք աւելի դժընդակ խստութեամբ և աւելի ընդարձակ չափերով կը մասակաբարուէին։

Հրաժարէ՛, գոչեցին Աշըգեանի, հըրաժարէ՛. նա ժպրհեցաւ փարիլ իւր աթոռին։ Օր մ՚ալ երիտասարդ ոք մի խանչեար մխեց Մաքսուտի կողն և ուրիշ մի

տարճանակով մրմռաց Աշըգեանի ականջին։

Ահաբեկեալ քաշուեցան վատքն։

Եւ երբ Սասնոյ մէջ բիւր մի Հայք ջարդուեցան, Հայ ժողովուրդն նոր լոյս առաւ Սուլթանի քաղաքականութեան և Մաքուսեններու ապշութեան վերայ և փոխեց իւր միտք, փոխեց և իւր ձայն, և Պատրիարք ընտրեց ԻԶՄԻՐԼԵԱՆ։

Իզմիրլեան Ս. Պատրիարքն ժողովրդի մտաց խորհրդակից էր և սրտին զգացակից, և սկսաւ խօսիլ փատիշահին ու դեսպանաց իբրև հաւատարիմ բերանն ազգին։

Իզմիրլեանի պատրիարքութիւնն կատարելապէս դեմոկրատիք է։ Նա ժողովրդի ընտրեալն է, ինչպէս և Քաղաքական Նոր ժողովն ճշմարտիւ հայկական է, փոխանակ թրքական կամ էֆէնտիական լինելու՝ նախորդին նման։

Հայ ժողովրդի ազգային կառավարութիւնն ճշմարիտ ազնուապետական էր ամիրայից օրով, կեղծ ազնուապետական էր էֆէնտիներու օրով, իսկ այսօր ժողովրդապետական է իսկապէս։ Ու ժողովրդական պիտի մնայ այսուհետև, զի ժողովուրդն հասած է։ Այսուհետև ո՛ր Պատրիարք որ ժողովրդի բերանն լինելու տեղ՝ թրքաշունչ թելադրութեանց անսայ, պիտի ընդունի ժողովրդի ապտակն ու պիտի տապալի անյարիր։

Բ

Այդ յեղափոխութեան նման յեղափոխութիւն մ'ալ արտասահմանի Հայոց մէջ կատարուելու վերայ է։ Հայ գաղթականութիւնն հասունացած է և կ'ուզէ տապալել եսամոլութեամբ կամ օտարամտութեամբ ախտաւորեալ պոռոտախօսներըն ու հաստատել տեմոքրատիք վարչութիւն մի իւր հայրենասիրական գործոց համար։

Մենք յոյս ունիմք թէ այս յեղափոխութիւն ևս կը յաջողի որպէս յաջողեցաւ Կ. Պոլսեանն։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանեա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՄԵՐ ԹԵՐՈՒԹԻՒՆՔ

Բ

Աստի հինգ տարի առաջ ՀԱՅՔ ուշադրութիւն հրաւիրեց մի գլխաւոր և հիմնական պակասութեան մեր ազգային գործունէութեան մէջ և առաջարկեց փութով դարման տանել նմա։ Պակասութիւնըն էր յայտնի՝ ազգային գործոց սարտամ և անկարգ վիճակում, և առաջարկութիւնն էր հիմնել մի ազգային միութեան կեդրոն յԵւրոպա որ սահմանէր ամբողջ գործոյն վերին տեսչութիւնն և գործէր հեղինակութեամբ և զօրութեամբ հայ հայրենասիրութեան։

Իբր իրողութիւն յիշեմ թէ ես առաջնոց եղայ յայտնել յարգելի խմբագրին ՀԱՅՔի զիմ կատարեալ համամտութիւն նկատմամբ սոյն խնդրոյն։ Դժբաղդաբար ոմանք կարճատես եթէ ոչ կուրացեալ ազգայինք ջանացին խոչնդոտել զնորին գործադրութիւն, այլք անտարբեր հանդիսացան. ժամանակն անցաւ, և հետևաբար ցարդ առաջարկեալ կազմակերպութիւնն դեռ իրականացած չէ։ Վերջին դէպք սակայն ոչ թէ միայն պարզեցին սոյն պակասութեան ծանր վնասներն, այլ ապացուցին անհրաժեշտ և ստիպողական հարկըն հայկական կազմակերպութեան։ Ուրախալի նշան մ'է թէ հայ ժողովուրդն իմացած է իրաց այս հանգամանքն և թէ կան այժմ առ մեզ բազում կարող հայրենասէրք որք բաւական արթուն են տեսնել վտանգն զոր մեր արդի անկերպարան վիճակն կ'սպառնայ և բաւական խղճամիտ են կատարել զայն պատասխանատուութիւն զոր արդի ճգնաժամն կը դնէ նոցա վրայ։ Ցաւալի է ուրեմն թէ այժմ, երբ միտք բաւական պատրաստուած են և երբ ներկայ պայմանք ի մասնաւորի կը պահանջեն արտասովոր ջանք, վերստին յուզումն խնդրոյն յանգի աւելի գոհացուցիչ վախճանի։

Հա՞րկ է որ կրկնեմք թէ պարտ է մեզ կազմակերպուիլ, թէ տեղային ընկերութիւնք պարտին ի մի ձուլուիլ ի տեղային մի կեդրոն, և տեղային կեդրոնք պարտին կապուիլ ի մի գլխաւոր և վերին կեդրոն։ Զայս ծրագիր յաջողցունելու երկու պայմանք հարկաւոր են։ Առաջին պայմանն է

որ կազմակերպելի ժողովուրդն ունենայ բաւական մտաւվարժութիւն (discipline) և իմացականութիւն անելու խոնարհամտութեամբ ինչ որ իւր բաժնին և կարողութեան անկ է և յարգէ զարամադրութիւն նոցա զորս նա ի պաշտօն կոչած է։ Երկրորդ պայմանն է որ բաւական թուով հայրենասէրք տեսնեն լաւ արդի կացութեան անբաւականութիւնն, չատեմ անշահութիւնն, և ըմբռնեն նշանաւոր օգտակարութիւնն և անհրաժեշտ հարկն ազգային կազմակերպութեան։

Իմ գաղափարն նկատմամբ մտաւոր հանգամանաց այն Հայոց որոց կազմակերպութիւնն կը խնդրուի բաւական բարձր է վստահացնել գիս թէ նոքա ունին պահանջեալ յատկութիւնն որ զնոսա արժանի կ'անէ քաղաքակրթեալ կենաց։ Կազմակերպութիւնն զոր մեք կը ջատագովեմք չէ այլ ինչ եթէ ոչ վարչական դրութիւնը համայն լուսաւորեալ աշխարհի։ Սոյն կազմակերպութիւնն է որ կը տեսնեմք ամենուրեք յԱմերիկա և յԵւրոպա կենաց բոլոր շրջանակաց մէջ։ Տէրութիւն, եկեղեցի, աշխատարան, վաճառատուն, բոլորն ալ հիմնուած են անտեսական և մեքենական երկու սկզբանցս վրայ։— կազմակերպութիւն գործոյ և բաշխումն աշխատանաց։ Հայ գաղթականն որ զայս կը տեսնէ ամենուրեք, որչափ ևս դժբաղդ լինի կրթութեան մասին, չթերանար գընահատել զնոցին արժանիքն և պատրաստ է զիւր բաժին ընուլ եթէ ազգային կազմակերպութիւն մի գոյանայ։ Բայց բարեբաղդաբար մշակեալ և բանիմաց Հայք չեն փոքրաթիւ իւրաքանչիւր քաղաքում և կրնամք լիովին վստահիլ նոցա ազդեցութեան վրայ։ Պատճառ չկայ կասկածիլ թէ պարծենկոտ և ինքնահաւան անձինք ոմանք, որք կան ամեն ազգի մէջ, կրնան անվայել վարմունք ցոյց տալ կազմակերպութեան սկզբանց հակառակ։ Երբ մարմինն գոյանայ և կարող, զօրաւոր և հաստատամիտ անձինք ընտրուին վարիչք գլխաւոր և տեղական կեդրոնաց, յայնժամ դիւրին է պաակառեցնել և սանձել անուղղայ անդամներ։ Բնաւ պատճառ չկայ ասելու թէ Հայք արժանի չեն կազմակերպեալ վիճակի։

Վերջին դէպք այնքան յայտնի պարզեցին զթերութիւն և անբաւականութիւն մեր արդի գործունէութեան, և այնքան պայծառութեամբ ցուցին կարօտութիւնն մի հեղինակազօր և կազմակերպեալ մարմնոյ, զի չեմ կարող հաւատալ թէ սակաւք միայն ազդուած են անտի։ Նամակքք որք ամենուստ կը տեղան ի «Հայք»ի խմբագրատուն միօրինակաբար ցոյց կուտան թէ կարօտութիւնն զգացուած է ամենուրեք և թէ ծրագրոյն յետաձգումն յետ այսու միայն նշան է ոխմար անհոգութեան և եղեռնային անտարբերութեան։ Շիքակոյի ազգայինք իրաւունք ունին պնդել թէ կազմակերպութիւնն պարտի սկսանիլ քաղաքում և ապա ծաւալել ընդ երկիրն և ապա ընդ աշխարհ։ Շիքակոյի և այլ տեղեաց ազգայինք արդէն կազմած են իւրեանց տեղական ճիւղերն և այժմու պարտքն Ամերիկայի Հայոց է միացնել այս ճիւղերն ի մի Ամերիկեան կեդրոն։ Արդի ճգնաժամն մասնաւոր հրամայական պարտք կը դնէ որ ամեն հայրենասէր, առանց բծախնդիր և փոքրոգի հաշուոց, ուշ տայ այս կարեւոր պահանջին և փութով յառաջացնէ գործադրութիւնն կազմակերպութեան։

Թերեւս, ոմանք, կան դեռ հայրենակիցք որք կ'ենթադրեն թէ արդի ազգային վիճակն գոհացուցիչ է և թէ կազմակերպութիւն կարեւոր հարկ մի չէ։ Ցաջորդ գրութեամբ կը յուսամ փարատել այս ցնորք։ Առ այժմ խնդրեմ յիշեցնել պարտքն մասնաւոր նիւթական օգնութիւն հայցնելու Անկլօ-Արմենեան ընկերակցութեան և Ջերպի։

Մարտ 5, 1895 ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

Լոնտոն Մարտ 1. Տէյլի Կրէֆիքի թղթակիցն Տիզլիսէն կը ծանուցանէ թէ փախստական Հայերէ շատ բան ստուգեր է կոտորածին մանրամասնութեանց վերաբերութեամբ։ Շատ կիներ իրենք զիրենք ժայռերէ վար գահավիժելով անձնասպան եղեր են թշնամեաց ձեռքն չկենալու համար։ Թրքերն ուելի խժական եղեր են քան զգուժ Քրդերն, զի Քուրդք սպանած են միայն, իսկ Թրքերն ահաւոր վայրագութիւններ գործած են ողջերուն և մեռցուածներուն վերայ։ Շենիկ գիւղացի Գրիգորի մասին կը պատմեն թէ 21 Թուրք ստակեցուց՝ մինչեւ որ Թրքեր յաջողեցան սպաննել զինքն։

ՀԱՅԱՍԷՐ ԱՄԵՐԻԿԱՅԻՔ

ՆԱՄԱԿ ՊՈՍԹՈՆԷՆ

Այժմ նկատենք թէ տեղւոյս Հայք իրենց շրջանակէն դուրս ինչ արած են և կ'անեն, ասա կարելի ու ներելի է յաւէտ համարձակ խօսիլ։

Շուրջ երկու տարի առաջ ասա ևս կազմուած էր Հայասիրաց ընկերութիւն մը զուտ Հայերէ, որոյ անդամներէ ոմանք ծանօթ Ամերիկեան քաղաքացիներ էին, բարեկամ նշանաւոր և ազդեցիկ եանքիներու որոց հաղորդած էին բաւական տեղեկութիւններ մեր դատին ու կացին վերաբերեալ։

Սոյն և այլ աղբիւրներէ ստացեալ տեղեկութիւններն բուռն հետաքրքրութիւն և եռանդագին գործունէութիւն ծնան, վաղ ընկերութիւն մը կազմուեցաւ բնիկներէ Ֆրէնսս օվ Արմէնիա (Բարեկամք Հայաստանի) անուամբ որ քիչ մը ատեն առանձին գործելէ յետոյ միացաւ Հայասիրաց ընկերութեան, և միացեալ ընկերութիւնն կրեց Եունայթէտ Ֆրէնսս օվ Արմէնիա, (Միացեալ Բարեկամք Հայաստանի) անունը, նպատակ ունենալով հրատարակութեանց, միթինկներու և այլ միջոցներով Ամերիկեան հասարակութեան ծանօթացունել Հայն և իւր դատը և ի նպաստ այդ դատին հանրային կարծիք ու համակրութիւն ձեռք բերել։

Արդարեւ Եունայթէտ Ֆրէնսս օվ Արմէնիա ընկերութիւնը եղած է միշտ մի մեծ, գործօն և կենդանի ուժ. կարծեմ չափազանցութիւն չլինիր ասել թէ այս երկրին մէջ ոչ մի այլ այսպիսի ընկերութիւն եղած է աւելի նպատակին նուիրեալ և արդիւնաշատ որչափ այս։ Իւր առաջին Մաս-միթինկը որ տեղի ունեցաւ պատմական Faunal Hallին մէջ, եղաւ գերազանցապէս փայլուն և օգտակար. ի մէջ այլոց ներկայ էր ու խօսեցաւ Նահանգապետը, հակիրճ բայց յանուն Մասաչուսէցի, յայտարարելով թէ անկարելի է ոևէ քաղաքացւոյ անտարբեր մնալ հանդէպ անլուր եղերացս, հետեւեալ օրը քաղաքիս բոլոր թերթերը լի էին ժողովին նկարագրութեամբ։

Նմանօրինակ միթինկներ գրեթէ ամեն շաբաթ տեղի ունեցած են քաղաքիս զանազան մասանց մէջ և ամեն անգամ որոշումներ ընդունուած և յղուած են Ուօշինկթըն։

Դեռ անցեալ կիրակի Մէքէնիքս Հօլին մէջ 8—10,000 հոգիէ բաղկացեալ ահագին միթինկին մէջ եղաւ և խրկուեցաւ նմանօրինակ որոշումներ, թէև ժողովն Հայոց համար գաւմարեալ չէր։

Գրեթէ մի ամիս առաջ Հայերէ և նշանաւոր Ամերիկացիներէ պատգամաւորութիւն մը յատկապէս Ուօշինկթըն գընաց, ուր Մր. Կրէշըմ, Արտաքին գործոց Քարտուղարը և ուրիշ Քանկրէսմէններ համակրութիւն ցուցած և խոստումներ արած էին։

Ջանք մ'ալ եղաւ իբր 2—3 ամիս առաջ մէկ միլիոն ստորագրութեամբ մէկ մէկ աղերսագիր յղել Նախագահին և Ռուսիոյ Ցարին բայց դեռ չգիտեմ այդ ինչ վախճան ունեցաւ։

Ցոդուածս լրացունելէ առաջ կարժէ ընթերցողաց ծանօթացունել մի քանին այն պատուական անձնաւորութեանց որ սոյն յուսալից գործին ամենէն աւելի նըպաստած են բարոյապէս և նիւթապէս։

Գեղեցիկ սեռը մեծարելու փափկանկատ սովորութեան հետեւած չեմ լինիր, յաւէտ արժանիք մը գնահատելու արդարութեան, նախապատուութիւն տալով Mrs. JULIA WARD HOWEի որ Նախագահը եղած է Ֆրէնսս օվ Արմէնիա ընկերութեան։ Սա միացեալ Նահանգաց կենդանի մեծագոյն բանաստեղծուհին կը համարուի, թէև արդէն 85 տարեկան, բայց իւր աննման միտքը դեռ ևս մուսայից կընծայէ. մարդ կը զարմանայ տեսնելով թէ այնքան նշանաւոր արանց մէջ այս տիկինը միշտ առաջին տեղը կը բռնէ։

Mr. GARRISON. Հիմնադիր և գործօն անդամներէն մին, իւր պատմական հօր նման ազատութեան ջերմ սիրահար և հզօր պաշտպան, քաղաքական և առեւտրական շրջանակաց մէջ հաւատարապէս ծանօթ եանքի մը։

Miss A. S. BLACKWELL. Կանանց իրաւանց պաշտպան անուն Տիկնանց մեծ կազմակերպութեան մը բերանն եղող թերթին խմբագրուհին։ Իւր մայրը հիմնած է յիշեալ թերթն ու ընկերութիւնը որ օր քան զօր զօրանալով այսօր այս երկրին ամենէն նշանաւոր կազմակերպութեանց մին կը համարուի և ապագային

մեծ դեր ունի կատարել։ Օր. Պլէքուել լաւ գրող և լաւագոյն թարգմանող մ'է, Հայերէ մանց օգնութեամբ իւր սահուն գրչէն իւր և տեղական այլ թերթերու մէջ ի լոյս եկած են մեր կարողագոյն բանաստեղծներու հաստնտիր քերթուածները, զոր օրինակ. Եղբայր Եմք Մեք, Հիմի՞ էլ Լռենք, Մայր Արաքսի, Ազատն Աստուած. ևն.

Պոսթոնի իգական սեռին մէջ թերեւս չկայ ուրիշ մը աւելի հայասէր և հայագէտ և մեր դատին առաւելապէս ծառայող քան Օր. Պլէքուել։

Mr. BLACKWELL. փոքրամարմին և գրեթէ ծերացեալ այլ խանդավառ և կարող ատենախօս, իւր ծախիւք Ուշինկթը գնացող պատգամաւորներէ մին, հայր Օր. Պլէքուելի։

Պատ. BARROS խմբագիր Պոսթըն Transcript, թերթին յաճախ խմբագրական և այլ կարեւոր յօդուածներ կը զետեղէ իւր օրաթերթին մէջ ի նպաստ մեր դատին։ Տիկին Պարոզ ևս արժանի է նկատողութեան և շնորհակալութեան։

Dr. LANSING. Բաղաքիս նշանաւորագոյն և ամենէն պերճախօս քարոզիչներէն մին, յոյժ հետաքրքիր մեր խնդրոյն, յաճախ կը խօսի, խաչակրութիւն կը քարոզէ ընդդէմ թրքաց։

Կան ուրիշներ որոց անուններն ու գործերն առ այժմ ներելի չէ յիշել, միայն սա ասոյգ է թէ կան տեղացիներ որ գործ ու պաշտօն իսկ ձգած մեզ համար կաշխատին թէև անաղմուկ և առանց ուշադրութիւն հրաւիրելու իրենց վրայ։

Մօտերս 20,000ի չափ անգլիերէն տետրակներ ի լոյս պիտի գան մարմնոյ մը միջոցաւ որ Սասնոյ կոտորածին ամենատոյգ և մանրամասն տեղեկութիւններն կը պարունակէ։ Նահանգապետն և այլ նշանաւոր անձինք քննելով ստորագրած են տետրակը, պարունակութիւնը հարազատ ճշմարտութիւն հռչակելով։

Այս բոլոր շարժմանց մէջ ի միջի այլոց Տիար Մ. Կիւլէզեան և Աթեդեան կարեւոր և նախաձեռնակ պատրաստականութիւն մը ցուցած են, խօսելով, գրելով, միթինկներ կազմակերպելով ևն։

Մի քանի բառ ալ երիտասարդի մի մասին որ ամեն տեսակետէ մի պատուաւոր ներկայացուցիչն եղաւ Հայ երիտասարդութեան առաջի տեղական քարձր չրջանակներու և որ կը յուսամ թէ օր մը Հայաստանեայց եկեղեցւոյ փայլուն և արժանաւոր պաշտօնեաներէն մին պիտի լինի։

Սոյն ազնիւ և յուսալից երիտասարդն է Տիար Խաչուրեանն էջմիածնոյ դպրոցին նախկին մի սանը, երկու տարի առաջ Շիքակոյի Բոլոմպեան աշխարհահանդէսին կրօնական վեհաժողովին մէջ խօսած էր մի հառ Հայ եկեղեցւոյ վրայ, անտի Պոսթոն գալով մտաւ Հարվըրտ Գոլէճ և մինչդեռ իւր ժամանակը գրաւեալ էր ուսանողութեամբ նա ծանօթացաւ նշանաւոր Ամերիկացիներու որոց ոմանց անուններն տուինք վերեւ, համակրանք, յարգանք և մտերմութիւն շահեցաւ։ Քերթուածոց թարգմանութեան մեծագոյն մասն իւր օգնութեամբ եղան, նաև մի մեծ դեր կատարեց Ֆրէնտս օվ Արմէնիաի կազմակերպութեան առթիւ. յաճախ լէքչերներ կը խօսէր եկեղեցեաց և ընկերութեանց մէջ, վերջապէս սխալ չըլլար ըսել առտ ոչ մի երիտասարդ իրեն հաւասար գործ տեսած է։ Գիտենք թէ 100էն աւելի հայ ուսանողներ կան այս երկրին մէջ. ամենը կը հրաւիրենք Տիար Խաչուրեանի օրինակին հետեւիլ։ * * *

ՆԱՄԱԿ ՖԻԼԱՏԷԼՖԻԱՅԷՆ

Ֆիլատէլֆիա, Մայս 8, 1895

Տէր խմբագիր,

Թոյլ տուէք որ երկտողիւս ուղղեմ մի սխալ որ տեսնուեցաւ ՀԱՅՐԻ նախորդ թուոյն մէջ քաղաքիս ազգայնոց մասին։

Ազգային գործունէութեան մէջ Ֆիլատէլֆիոյ Հայերն թէև մասնաւոր առաւելութիւն ցոյց տուած չեն, սակայն, այլ գաղութներէ ետ մնացած չեն հայրենասիրական զգացմանց իրագործման մէջ։ Թէ և գաղափարի տարբերութիւնք սերմանած են անմիաբանութեան սերմեր, ի վերայ այսր ամենայնի գաղթականութիւնս հարկ եղած գործունէութիւն ցոյց տուած է ի պահանջել հարկին։

Սասնոյ կոտորածն զմեզ ևս թունդ հանած է և միաբանութեան սէրն մեր մէջ արծարծած։ Կատարած ենք ընդհանուր ժողովներ և հանգանակութիւն արած։

Յունվարի մէջ կատարեցինք նաև փառաւոր մասմիթինկ մը Ամերիկացւոց համար։ Աւելի եռանդուն գործունէութեան համար կը կարօտինք ձեր և բոլոր ազգայնոց բարեմաղթութեան ՍՏԵՓԱՆ

ՆԱՄԱԿ Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

Ռուսչուք, 18 Փեբր. 1895

Մեծ. Խմբագիր,

ՀԱՅԲի ընթերցողներին վաղածանօթ է կաթոլիկ Լէօն Սիսլեան անուն մատնիչը, որը 92դ տարվայ Մայիս 16ին աստ եկել էր Դրօշակի կուսակցութեան պատրաստած ռումբերի հետեանօք հայ բանտարկեալների խնդիրներն ի մօտուստ ուսումնասիրելով իւր բարեխնամ(.՞.՞.՞) կառավարութեան տեղեկագրելու։ Սոյն մարդուկն որ նոյն տարվայ մինչև 29 Յունիսի քաղաքս եղաւ, ահով և սոսկմամբ անցնում էր իւր բոլոր օրերն, այնպէս որ ամեն ուրեք պահապան զինվորով մի շրջագայում էր, և իւր ահն ու սարսափն կրկնապատկելով տարաւ հաղորդեց զինքն առաքող բաշի բոզուկ բռնապետութեան. որը այդ օրից իւր մասնաւոր ուշադրութեան առարկայն չինեց Ռուսչուքն և Ռուսչուքցի Հայն։ Ամեն առթիւ երբ տեղացի կամ ոչ-տեղացի Հայ մի տասի կը գնար, կամ աստ կամենում էր գալ բիւր տեսակ նեղութեանց, հարցաքննութեանց և երբեմն էլ բանտարկութեանց հանդիպում էր։ Այս օրերումս նորից դժբաղդութիւն ունեցանք յիշեալ վատ արարածի մոռացված Սիսլեան անունն և իւր նեխեալ ցըռուկի երկարելն տեսնել հէնց մեր կրթական գործերում, Լուդվիգ Սաֆարեան ծածկանվան ներքեւ, թէ ի՞նչպէս— Տեղւոյս քառորդ դարու աւագ ուսուցիչ Տիար Գէորգ Սվազճեանի կամովին հրաժարումէն ի վեր Ազգային Ս. Մեսրոպեան վարժարանն չունեցաւ իւր պիտոյին իսկապէս գոհացում տուող մի այլ ուսուցիչ։ Այս անգամ Յունվար 20 (հ. տ.)ին քաղաքիս Ազգային վարժարանից արտաքսվեց բարոյապէս փճացած, հոգեպէս ըստրնացած Տիգրան Սէքսէնեանն, որը աստ դասախօսելու եկել էր անցեալ տարվայ Սեպտ. ամսում։

Անցեալ տարի տեղւոյս թաղականութիւնն բարեմտաբար դիմեց Կ. Պոլսոյ ուսումնական ժողովոյն, որպէս զի քաղաքիս Ազգ. վարժարանին պատշաճ և վկայեալ ուսուցիչ մի ուղարկեր, Ուսումնական ժողովն իւր յարանփոփոխ սովորութեան համեմատ «դոմբ մտնել թուխ իշուն ճակատը համբուրել»ու պէս չէր վարանել նմանապէս Սէքսէնեան անաստուին էլ համբուրել։ Սա հէնց առաջին առթիւ պարզեց իր տարրական կրթութիւնից զուրկ լինելն, ինչպէս և էլ Վառնայում իւր մատնիչ լինելու գծուծ փորձերն, որոնք տեղի ավեցին տեղւոյս երիտասարդութեան (*) բանաւոր կասկածանաց, այնպէս որ այս վերջի շաբաթներումս արգուի արթնութեամբ սկսան հսկել և հաստատեցին Սէքսէնեանի թագուն լրտես մի լինելն։ Տեղւոյս խոհուն երիտասարդութիւնն այնչափ ազնիւ վարուեցաւ որը իրաւամբ պատիւ բերեց իրան, և արժանի համարվեց գովութեան, զի երբ հաստատեց Սէքսէնեանի լրտեսութիւնն, Անգլիական պաղարիւնութեամբ և Հայկական վեհանձնութեամբ ներեց և երեսին յայտարարեց գրեթէ սա խօսքերն «չնորհակալ եմք քու պաշտօնավարութիւնիդ, յետ այսու մեր դպրոցն դուռը փակ է քեզ համար, գնա՛ ուր որ կամենաս»։ Գրոհի սիրտը բարկութեամբ լեցվել էր և փափաքում էր շարաշարս պատուհասել յիշեալին, բայց երբ նկատեց հոգաբարձու երիտասարդութեան մեծանձնութիւնը ինքն էլ ձեռնթափ կեցաւ ու ներեց, նման վիպական ժանվաժան և ժավերի խօսակցութեան «հրացանը օդում պարպվեց։»

Սէքսէնեան խոստովանել է իւր հարցաքննութեան մէջ թէ, Սիսլեանի իրեն տված ծածկանունն էր Լուդվիգ Սաֆարեան և իւրն էլ Թորոսեան։ Արդ ի լուր Հայ ազգայնութեան գալիս ենք յայտարարել ՀԱՅԲի պատվական էջերով թէ, Հաճընցի Տիգրան Սէքսէնեան անուն համբակ խելացնոր վարժապետը դուցէ աւելի իւր ապչութեանը հետեանօք յիմար լրտես մի պառել է, և Լուդվիգ Սաֆարեան կամ Լէօն Սիսլեանն էլ աւելի մի զօրաւոր փաստ ընձեռնեց մեզ, հռչակել զինքն կատարեալ վատ և գծուծ մատնիչ մի լինելն։

Ռումանիոյ մէջ գտնուած տաճկի հայ պաշտօնեաներից շատերն այս վերջերս պաշտօնանկ եղել են Հայկական Խնդրոյ հրատապ երևոյթի պատճառաւ, մինչդեռ այդ պաշտօնեաների մեծ մասն գոնէ իրենց գործերով ապացուցել են թէ տաճկի մի չափ գիտցած են Հայուն փնտռակար լինել. սրանց պաշտօնանկութիւն մեզ համար ուրախալի է զի մերազնէից շատերն բարեմտաբար Հայ անուններից խաբուելով յիշեալ վատերի շահատակութեանցը զոհվել են։ * * *

(*) Անցեալ տարվայ Սեպտեմբերից սկսեալ տեղւոյս դպրոցի բարեկարգութեան հոգն երիտասարդութիւնն է ըստանձնել։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—Լոնտոն Մարտ 5. Թելէկրաֆի Թղթակիցն կը յայտարարէ թէ Մահմետականաց մոլեռանդութիւնն կը բոցավառի և Քննիչ Ժողովոյ ցրուելէն յետոյ Հայերն ջարդելու սպառնալիք կը լսուին ի Խարբերդ, Վան, Բաղէշ, Մուշ և Կարին: Կ'ասէ նաև թէ Սասնոյ գաւառներէն իբր 50 հոգի բռնութեամբ Թուրք զինուորականաց բաշխուած են իբրև աւար:

—Լոնտոն, Մարտ 3— Տէյլի Նիւզի Կ. Պոլսոյ Թղթակիցն կ'ասէ թէ Ամերիկեան Պորտի ի Մարաշ բնակող միսիոնարաց կացութիւնն տագնապալից է: Անոնցմէ երկուքն Բրիտանական հպատակ են. Հալէպի նահանգապետն կը յայտարարէ թէ կասկած ունի անոնցմէ թէ ապստամբական նպատակաց կը ծառայեն, և հրամայած է որ նոցա նամակներն բացուին և ի Հալէպ յղուին քննուելու համար: Նոցա ուղարկեալ ուտելեաց և հանդերձեղէնի սնտուկներն եւս պէտք է քննուին ի ձեռն Մարաշի Ոստիկանութեան, թէպէտ յիսկէնտէրուն արդէն միանգամ քննուած են՝ Թուրք հողն մտնելու ատեն: Մարաշի ոստիկանապետն այդ տեսակ մի քանի սընտուկներ վար դրած է: Զայնս բերող ջորեպաններն ալ կալանաւորեր է: Յայտնի համարձակ յայտարարած է թէ միսիոնարքըն զէնք ներածած և մեծ քանակութեամբ մթերած են՝ Մահմետականաց դէմ կիրառութեան կազմ և պատրաստ: Մոլեռանդութիւնն տգէտ խառնիճաղանճին արդէն գրգռուած էր ընդդէմ Հայոց, և այժմ կ'ուղղուի միսիոնարաց ալ: Պահէ ի պահ աղետալի արկած մի կրնայ պայթիլ եթէ յուզումն չսանձահարուի:

—Լոնտոն, Մարտ 2. Արտաքին Գործոց Պաշտօնատունն ատոր շատ գոհ է որ Լօպանօֆ Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարար կարգուած է:

—Կ. Պոլիս, Մարտ 3— Քննիչ Յանձնաժողովոյն ի Մուշ ունեցած 12 նիստերու արձանագրութիւն Թուրք վկայից վկայութենէն զատ բան չի պարունակեր: Նոր ոչ ինչ երևան բերուած է:

Կ. Պոլսոյ մէջ բանտարկուած Հայերու մեծ մասն արձակուած են, և մնացեալք ալ հաւանօրէն շատ երկար չպիտի մնան կալանաւորուած:

Կ. Պոլիս, Մարտ 3. Մի քանի միսիոնարներ որք յերկիւղէ Թրքաց մեկնած էին Բաղէշէն ի Մուշ, կը վերադառնան Թէրէլի ազդարարութեան համեմատ:

Ուօչինկթընէն կը գրեն մեզ—

«Ամերիկայի Կանանց Ազգային Խորհուրդն,» որ տարեկան նիստն արաւ մայրաքաղաքումս, իւր փակման նիստին մէջ հետևեալն քուէարկեց:

«Կ'որոշեմք,

Թէ կ'ողբամք այն խժդժութեանց վերայ որոց ենթարկուած են Հայք, և գնահատելով կ'արձանագրեմք մեր հայ քոյրերու աննկուն դիւցազնութիւնն որով նոքա զոհեցին իրենց կեանք ի պաշտպանութիւն իրենց պատուոյն և խղճի ազատութեան. և ջերմագին կոչում կ'անեմք մեր քերց ի Մեծն Բրիտանիա և յայլ երկիրս Եւրոպիոյ գործածել իրենց ազդեցութիւն իրենց կառավարութեանց քով, որպէս զի անմիջական միջոց ձեռք առնուն հաստատելու ապահովութիւն կենաց, պատուոյ և ստացուածոց ի Հայաստան:»

Այս քուէարկութեան նախապատրաստիչ այժն Հայոցմէ եկաւ, մանաւորապէս Տիար Քիւրէչեանէ որ աւելի քան միանգամ խօսեցաւ զՀայաստանէ կանանց ժողովներուն մէջ:

Ֆրէզնոյէն կը գրեն մեզ.

Մշոյ և Բաղիշոյ հայ արկածելոց և տնանկաց ի նպաստ հանգանակութիւն մը արինք հոս: Գոյացաւ 100 տոլար զոր պիտի յղեմք ընդ հուպ մեր Թշուառ եղբարց բաշխուելու համար:

—Ֆրէզնոյի մեր հայրենակցաց այս գթութեան ձեռնարկն ամենայն գովեստի արժանի է:

—«Լ'առմէնի-Արմէնիա» կը ծանուցանէ թի Նիւ Եորքի Ֆիլարմէնիք ընկերութեան ձեռքով 666 տոլարի գումար մ'ընդունած է յօգուտ Թերթին անգլիերէն հրատարակութեանն: Նաև Բարիզէն երկու հայրենասէրք 500 ֆրանքի գումար մի յղած են ի նպաստ Փրոֆ. Ջերազի գործունէութեան:

Մարտ 3ի կիրակի օրն, եպիսկոպոսական եկեղեցւոյն մէջ որ ի թիւ 220 Ար. 23դ փողոցի, Հայոց ժողով մ'եղաւ, ուր նախ համառօտ կրօնական պաշտամունք կատարուեցան կէս մի եպիսկոպոսական և կէս մի հայկական ձևով, առաջնորդութեամբ Պատ. Յ. Ս. Յակոբեանի: Ապա բանախօսեց Հայքի խմբագիրն հայերէն լեզուաւ՝ նիւթ ունենալով «Զօրութիւն:» Յետոյ եկեղեցւոյն եպ. քահանայն Տէր Էմիրի՝ ներկայեց զԱրժ. Տէր Տոքթ. Թիֆինի, աւագերէց Նիւ Եորքի եպ. եկեղեցեաց, որ եւս խօսեցաւ իբր 15 վայրկեան, յայտնելով ջերմ համակրութիւն առ Հայս և Հայաստանեայց եկեղեցին: Հայ խմբակն, առաջնորդութեամբ Տր. Իշխանեանի երգեց «Սասուն» անգլիերէն երգն և «Մայր Արաքսին:»

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ